ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/62» ծածկագրով ընթացակարգի արդյունքում 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-1 պայմանագիրը 26.09.17թ-ին մասնակի լուծելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: *Մասնակցի դիմումը՝* հիմք ընդունելով 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-1 գնման Պայմանագրի9.9 կետը 7977 կգ «կաղամբ» ապրանքատեսակի մասով Պայմանագիրը երկկողմանի մասնակի լուծելու առաջարկով:

Փոփոխության նկարագրություն: N ՇՀԱՊՁԲ-7/62-1 *պայմանագիրը մասնակի լուծելու մասին.*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշումը, ինչպես նաև Պայմանագրի 9.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ 7977 կգ «կաղամբ» ապրանքատեսակի մասով: Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 557592.3 (հինգ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր իննսուներկու ամբողջ երեք) ՀՀ դրամով և կազմում է 49625681.1 (քառասունինը միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր ութսունմեկ ամբողջ մեկ) ՀՀ դրամ:

Փոփոխության հիմնավորում: Չի հակասում ՀՀ կառավարության որոշմանը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տ.Աբրահամյանին:

Հեռախոս՝ *010-29-44-18*:

Էլ. փոստ՝ t.abrahamyan.*am:*

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N ՇՀԱՊՁԲ-7/62-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԱՄՆԱԿԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 26.09.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ա/Ձ Արայիկ Աբրահամյանը, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, , երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով կողմերի նախնական համաձայությունը, ինչպես նաև 26.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/62-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.9 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք Պայմանագրի 9.9 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագիրը լուծել մասնակի՝ «կաղամբ» ապրանքատեսակի մասով Գեղարքունիքի տարածաշրջանից 7977 կգ: (հունիս-հուլիս)

1.2 Սույն Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված լուծման արդյունքում Պայմանագրի գինը նվազում է 557592.3 (հինգ հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր իննսուներկու ամբողջ երեք) ՀՀ դրամով և կազմում է 49625681.1 (քառասունինը միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր ութսունմեկ ամբողջ մեկ) ՀՀ դրամ:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման /կնքման/ պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.4 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ա/Ձ Արայիկ Աբրահամյան
ք. Երևան Բագրևանդի 5	Գեղարքունիքի մ., գ. Գեղարքունիք Կ. Դեմիրճյան փ.19
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220089602217000
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 83044915
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

AK 0651695